



ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԲԱՑՈՒՄԸ

1987 թ. սեպտեմբերի 26-ը ուրախության և հիշարժան օր է Արարատ-
յան հայրապետական թեմի համար: Ամենայն Հայոց Հայրապետի 79-ամ-
յակին զուգադիպեց մի հանդիսավորություն ևս: Բացվեց Երևանի Սուրբ
Սարգիս եկեղեցու մոտ կառուցված Արարատյան հայրապետական թեմի
առաջնորդարանի ճյուղի շենքը:

Սույն հանդիսավոր առիթով Արարատյան հայրապետական թեմ՝ Սուրբ
Սարգիս եկեղեցի ժամանեց Ամենայն Հայոց Հայրապետ Ս. Տ. Վազգեն Ա
Սրբազնագույն կաթողիկոսը, որին ողնկցում էին Գերագույն Հոգևոր Խոր-
հրդի ատենապետ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Ամերիկայի
Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդ Ս. Թորգոմ արքեպիս-
կոպոս Մանուկյանը, Ամերիկայի Միացյալ Նահանգաց արևմտյան թեմի
առաջնորդ Ս. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, Ռումինիայի և Բուլղա-
րիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը,
Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Ս. Զավեն արքեպիսկոպոս Զինչիճյա-
նը, Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալա-
նը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ և Հունաստանի հայոց թեմի հայ-
րապետական պատվիրակ Ս. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյանը և Արգեն-
տինայի հայոց թեմի առաջնորդ Ս. Գրիգորիս եպիսկոպոս Բունիաթյանը:

Վեհափառ Հայրապետին և հյուրերին Սուրբ Սարգիս առաջնորդա-
նիստ եկեղեցու մոտ դիմավորեց Արարատյան հայրապետական թեմի ա-
ռաջնորդական փոխանորդ Ս. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը, որը
Վեհափառ Հայրապետին և հյուրերին առաջնորդեց եկեղեցի:

Նույն ուրախ առիթով Բելգիայից ժամանել էր ճորակառույց առաջ-
նորդարանի շենքի բարերար տիար Ժան Աբաջյանը իր հարգելի տիկնոջ՝
Սոնա Աբաջյանի հետ: Ժամանել էին նաև հյուրեր Սիյուրթից՝ Անգլիայից,
Ֆրանսիայից, Կանադայից, Ավստրալիայից և այլ գաղթօջախներից: Հրա-
վիրվել էին նաև հարգարժան հյուրեր Մայր Հայրենիքից, այդ թվում՝ Հայ-
րենի կառավարության բարձրաստիճան գերկայացուցիչներ և բազմաթիվ
մտավորականներ:

Վեստփա ժամը 13-ին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ
սկսվում է բացման հանդիսավոր արարողությունը: Ներկաների խանդա-
վառ արտահայտությունների և ծափոփելների ներքո Վեհափառ Հայ-
րապետը և առաջնորդարանի բարերար տիար Ժան Աբաջյանը կտրում են
բացման ծապսղենը, և ներկաները «Ուրախ լը...» շարականի երգեցողու-
թյամբ մոտք էն գործում առաջնորդարանի դահլիճ:

Հանուն Արարատյան թեմի իր որդիական շնորհակալության ջերմ
խոսքն է ուղղում Վեհափառ Հայրապետին և մեծարգո բարերարներին Ա-

րարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գաբեգին եպիսկոպոս Ներսիսյանը.

«Վեհափառ Տեր,

Եթե շրթունա իմ բաճամ, բերան իմ երգեսցե օրհնություն Ձեզ:

Եվ այս օրհներգությունը ուղղված է Ձեզ արդարորեն, զի հայրենանվեր և եկեղեցաշեն վարձք Ձեր բազում են հերկրի:

Մեզանից և ոչ ոք չի կարող անգիտամալ, որ տասնամյակներ առաջ Ձերո՞ւ Սրբությանը հանձնված մնասները համեստ էին, թե՛ քանակով և թե՛ որակով: Սակայն, որպես համբերատար, բարի և իմաստուն սերմնացան և հովվապետ, դուք արդյունավորեցիք և բազմապատկեցիք դրանք, առաջնորդվելով «թող գոա զայս ամ կա... թերևս արասցէ պտուղ» (Ղուկ. ԺԳ. 8) ավետարանական խորիմաստ պատգամով: Եվ երեսուն երկար տարիներ հայ հավատացյալը Մայր Հայրենիքում թե՛ Սփյուռքում քայլեց Ձեզ հետ, ունեցավ բազում առիթներ ցնծության, հաճախ անտեղյակ Ձեր ներքին հույզերին և տագնապներին հոգեմաշ:

Անշուշտ հնարավոր չէ առանձին նախադասություններով ներկայացնել և լուրջաբար երեսնամյա Ձեր գործունեությունը: Մեզ թվում է, սակայն, Ձեր վաստակը հարազատորեն և ճշմարտապես արտահայտած կլինենք՝ բարբառելով. «Եթե մարդիկ անգամ լռեն, քարերը պիտի աղաղակեն», այն քարերը, որոնք Ձեր ձեռքով տեղադրված, վերահաստատում են հավերժության կնիքը խոնարհյալ մեր վանքերի, այն մասունքները և նշխարները աշխարհում, որոնք խոսում են այսօր աշխարհին՝ հիասքանչ գանձատունով Ս. Էջմիածնի, նորաբաց եկեղեցիների հնչող զանգերը և նորակառույց այս առաջնորդարանը Արարատյան թեմի:

Այսօր խմբված Ձեր շուրջը, Վեհափառ Տեր, մենք մեր օրհնություն ենք վերառաքում, քանզի Նոյեմբերով վերածնված, հրաշքից հրաշք քայլող մեր Հայրենիքում, այս սուրբ հողի վրա, իրականացել է Արարատյան թեմի հոգևոր ու աշխարհիկ սպասավորների և հավատացելոց տարիների երազանքը:

Իրականացել է մահ ազգի, Հայրենիքի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ «զքոյս ի քոյոց քեզ մատուցանենք» երախտագիտության ուխտը բելգիաբնակ հայորդիներ տեր և տիկին Ժան և Սոնա Աբաջյանների, որոնց ազնիվ բարերարությամբ կառուցվել և ի վայելումն ազգիս է հանձնվում գեղեցկակառույց այս առաջնորդարանը:

Մեծազնիվ բարերարներ,

Դուք Ձեր վաստակը միախառնելով հայրենաբնակ եղբայրների և քույրերի արդար աշխատանքին հայրենի երկնքի տակ, ապառաժի վրա բարձրացրել եք այս կառույցը, որին ոչ մի խորշակ և ոչ մի վտանգ չի կարող սպառնալ:

Ձեր հայրենանվեր գործը և Ձեր անունը օրհնությամբ պիտի հավերժանա Արարատյան թեմի պատմության նորալեջ մատյանում: Այն պիտի հավերժանա մահ այս կառույցի սրահի ճակատին տեղադրվող մարմարյա տախտակի վրա:

Արդ, պատմական այս ուրախ առիթով, մենք՝ անձամբ մեր և թեմիս հոգևոր դասի և պաշտոնեության անունից, հայտնում ենք մեր որդիական շնորհապարտ սերը, խոնարհությունը և նվիրումը Արարատյան թեմի առաջնորդ Ամենայն Հայոց կաթողիկոս Վեհափառ Հայրապետին, ի խորոց

արտի մեր երախտագետ զգացումները՝ մեծարգո բարերարներ տեր և տիկին Աբաջյաններին:

Օգտվելով այս գեղեցիկ առիթից, ցանկանում ենք հոգու մի պարտք ևս կատարել: Մեր շնորհակալ զգացումները արտահայտել Հայ Եկեղեցու Գործերի խորհրդին, հանդիսությանը ներկա խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանին և նախագահի տեղակալ տիար Ռաֆիկ Զարգարյանին, նրանց միջոցով նաև՝ մեր հայրենի և քաղաքային իշխանություններին, թեմական կյանքում արձանագրած հաջողություններում իրենց բախտեհաճ վերաբերմունքի համար:

Շնորհակալության և գնահատանքի խոսք ունենք նաև բազմավարտակ մեր շինարարներին, ի մասնավորի Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ պրն. Արծրուն Գալիկյանին և շինարար պրն. Միքայել Հովհաննիսյանին, որոնց հետևողական աշխատանքի արգասիքն է՝ որակը և գեղեցկությունը այս շինության:

Ողջունելով Ձեր ներկայությունը նորակառույց առաջնորդարանի բացման հանդիսությանը, սիրելի հրավիրյալներ, և շնորհակալություն հայտնելով, յանդրում ենք Ձեզ մեզ հետ միասին աղոթք առաքել առ Աստված վասն խաղաղության ամենայն աշխարհի, վասն շինության և բարեկարգության մեր հայրենի երկրի, վասն անշարժության և պայծառության Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և վասն արևշատության նրա արժանընտիր գահակալի՝ Վազգեն Ա Հայրապետի՝ ի փառս և հուրախություն Հայ Եկեղեցու ու հայ ժողովրդի:

Վեհափառ Տեր, եթե շրթունս իմ բանամ, բերան իմ երգեսցե օրհնություն Ձեզ. ամենա՝

Այնուհետև իր երախտագիտության և՛ նվիրումի խոսքն է ասում՝ մեծարգո տիար Ժան Աբաջյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ սրբազան հայրեր,

Սիրելի հանդիսականներ,

Նախ պետք է որ Ձեր ներողամտության դիմեմ, որովհետև հրապարակալ խոսելու վարժություն չունիմ: Ուզեցի սակայն այս առիթով պարզորեն արտահայտել իմ զգացումս: Երբ 1981 թվականին, առաջին անգամ ըլլալով, կնոջս հետ միասին այցելեցինք Հայրենիք, իսկապես հուզվեցանք՝ լսելով մեր շուրջ ամեն կողմ հայերեն մեր քաղցր լեզուն, այցելելով բազմաթիվ հուշարձաններ,՝ հրաշալի հիմ վանքեր ու եկեղեցիներ, զորս կանգներ էին մեր հանճարեղ բարեպաշտ նախնիք: Իսկույն արթընցավ սրտիս մեջ փափագը, որ ես ալ իմ կարգիս բերեմ իմ համեստ քարը հայրենիքի վերաշինության համար: Թեպետ բողոքական, բայց հավատացյալ քրիստոնյա փափագս է եղած միշտ ծառայել մեր անգալին Եկեղեցիին, Սուրբ Լուսավորչի հիմնած Եկեղեցիին, որ դարերով և պատմության ամենադառն շրջաններում մեր ազգամյա հպարտության գլխավոր, եթե ոչ միակ ուժը դարձած է, որ անդադար՝ հույս և հավատք ներշնչած է մեր ժողովրդին:

Վեհափառ Տեր, երախտապարտ եմ, որ թույլ տվիք ինձ երազս իրագործելու՝ մասնակցելով Խորվիրակի պրնավայրի վերանորոգման, ապա կառուցման Սուրբ Սարգիս եկեղեցվո կից այն՝ գեղեցիկ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանին, որ՝ գործն է տաճարանդավոր ճարտարապետ պարոն Գալիկյանի և կարող շինարար պարոն Հովհաննիսյանի:



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՏԻԱՐ ԱԲԱԶՅԱՆԸ ԿՏՐՈՒՄ ԵՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ԲԱՑՄԱՆ ԺԱՊԱՎԵՆԸ



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՆԳԻՍԱՍՐԱՀՈՒՄ



ԱՐԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԵՔԱՄՈՒՏԻ ԱՌՋԵԿ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱՔԱԶՅԱՆՆԵՐԻ, ՄԱՅՐ ԱԹՈՌԻ
ԴԻՎԱՆԱՊԵՏ ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ԵՎ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆԻ ԸՔԱՄՈՒՏՔԻ
ԱՌՋԵՎ

յանի: Պարտ կհամարիմ հոս իմ խորին շնորհակալությունն հայտնել երկու առաջնորդական փոխանորդ՝ Արսեն սրբազան եպիսկոպոսին ու Գարեգին սրբազան եպիսկոպոսին, որ հաջորդաբար և առանց իրենց հոգնությունը խնայելու՝ մի քանի տարի անընդհատ հսկեցին շինության գործողությունները, մինչև դրական ու նախանձելի արդյունքին հասնիլը:

Կնոջս և ինձի համար հրճվանքի օր մըն է այսօր, կմնա սակայն ներքին կահավորման հարցը: Այն ալ պիտի ըլլա իմ նվերը Վեհափառ Հայրապետին գահակալության երեսունեկուներորդ տարեդարձին առթիվ:

Թող Նախախնամությունն բոլոր հայերուս առհավետ քաջություն և երջանկություն պարգևեալ:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետ Ս. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսը իր օրհնության և բարեմաղթության խոսքն է ուղղում մեծագոյն բարերարին և Գարեգին եպիսկոպոսին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Բոլորս այս պահին ոչ միայն ուրախ ենք, այլ նաև հուզված: Այսօր 26 սեպտեմբեր 1987 թ. շաբաթ օր, մեր վերածնված Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մայր քաղաք Երևանի սրտի վրա, Սուրբ Սարգիս եկեղեցու կողքին, բարձրացավ այս առաջնորդարանի շենքը, որի օրհնությունը Մենք երջանկություն ունեցանք կատարելու Ձեր ներկայությամբ: Իրոք պատմական մի օր է այս և՛ մեր Եկեղեցու, և՛ մեր մայրաքաղաքի համար, և կարծում եմ, չեմ սխալվի, եթե խսեմ, որ Արարատյան թեմը պատմության ընթացքին այսքան շքեղ առաջնորդարան չի ունեցել, ինչքան այսօր մեր սովետական կյանքի պայմաններում:

Մեր միտքը այսօր գնում է դեպի հետ, դեպի մեր պատմության քրիստոնեության առաջին դարերը, դեպի Սուրբ Գրիգոր Լուսավորչի օրերը, երբ Հայաստան աշխարհը իր սիրտը բացեց Քրիստոսի լույսին և վերանորոգեց իր կյանքը թե հոգևոր, թե կրթական, գրական, մշակութային և նույնիսկ քաղաքական իմաստով: Եվ մեր ժողովուրդը ապրեց իբրև այդպիսին մինչև մեր օրերը՝ հակառակ բազում արհավիրքների և ողբերգությունների, որոնք եկան ու անցան մեր երկրի ու ժողովրդի գլխի վրայից, հատկապես 10-րդ դարից հետո, երբ հայ ժողովուրդը կորցրեց իր պետականությունը և ընկավ հարվածի տակ բազում բարբարոս ցեղերի և ազգությունների: Եվ ապա վերջին դարերի ընթացքին էլ դաժան լծի տակ՝ պարսկական և օսմանյան տիրապետության: Այս շրջանը, այսօրվա երեվանը՝ իր Արարատյան թեմով, իր Էջմիածնով, պարսկական տիրապետության տակ մնացին: Մեր պատմությունը բազում տխուր էջեր աճանագրած է: Քաճի-քանի անգամներ կողոպտված են Արարատյան թեմը և Ս. Էջմիածինը: Պատմաբաններ վկայում են, թե Պարսկաստանի հարկահավաքները գալիս էին մտրակը ձեռքին, և Էջմիածնի գահասրահի մեջ նույնիսկ կարողիկոսներ մտրակված են, որպեսզի գանձեր երևան հանեն և իրենց, այսպես կոչված, տուրքը վճարեն պարսիկ բռնակալներին: Երկար է մեր տխուր պատմությունը: Ես պարզապես ուզեցի այս պատկերը ներկայացնել Ձեզ, որպեսզի մենք կարողանանք գնահատել իրապես մեր ներկան, մեր վերածնված Հայրենիքի պայմանների մեջ: Մեր Եկեղեցին հետզհետե իր պատմական բնական հունին մեջ է մտնում՝ շնորհիվ մեր բարեխնամ կառավարության հոգատար վերաբերմունքին:

Ահա վասիկ այսօր, այս երջանիկ պայմանների մեջ, ընդհանուր հայրենական վերաշինության պայմանների մեջ, Մենք գոհումնակություն ունեցանք բացելու դռները այս գեղեցիկ շենքի, որի կառուցումը պարտիմք առաջին հերթին բարեսիրտ և առատաձեռն բարերարների՝ տեր և տիկին Ժամ և Սոնա Աբաջյանների, որոնք ներկա են այսօր այստեղ: Տիկին և պրն. Աբաջյան, իմ շնորհակալության և երախտագիտության խոսքը Ձեզի, իմ օրհնության խոսքը Ձեզի, բայց գուցե իմ այս խոսքից ավելի, այս ժողովրդի հուզումն է և նրանց աչքերում փայլող արտասուքները ուրախության, իբրև արտահայտություն երախտագիտության Ձեր մեծ և բարի գործի համար: Թող Աստված Ձեզ բազմապատիկ վարձահատույց լինի, Ձեր կյանքը անսահմանորեն երկարի, որպեսզի երբեմն գոնե երկու-երեք տարին մի անգամ այցի գաք Հայաստան: Ձեզ կսպասենք գրկաբաց ընդունելու և՛ Ս. Էջմիածնի մեջ, և՛ այստեղ, որ Ձեր տունն է արդեն:

Գուք պարգևատրված եք Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով և ունիք այդ շքանշանը: Բայց Գրիգոր Լուսավորչի շքանշանի ավելի փոքր ձևն այլ ունինք Ձեր ամենօրյա գործածության համար, գոր ուզում ենք այս առիթով Ձեր կուրծքին գետեղել:

Այս առիթով կամենում եմ ավելացնել իմ գնահատականի խոսքը Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդին, իմ փոխանորդին, Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանին, որ վերջին տարիներին շատ աշխույժ և շինարար և նվիրյալ գործունեություն ծավալեց, որի արգասիքներից մեկն էլ այս առաջնորդարանի շինության իրականացումն է: Ինչպես կտեսնեք, բավական ամուր և գեղեցիկ և ներկայանալի մի շինություն է, սակայն սա միակ շինարար գործունեությունը չէ մեր սիրելի եպիսկոպոսին, նա Արարատյան թեմի իբրև առաջնորդ իր հոգածությունը տարածում է նաև այլ եկեղեցիների վրա, և ես ուզում եմ այս առիթը օգտագործել զինքը շնորհավորելու և գնահատելու իր աշխատանքը, և մաղթելու իրեն քաջառողջություն և անսպառ եռանդ և նորանոր ներշնչանքներ, որպեսզի ծառայի մեր Սուրբ Եկեղեցուն, մեր հավատացյալ ժողովրդին, մեր Մայր Հայրենիքին:

Մեր գնահատանքը նաև Արարատյան թեմի հոգևոր դասին, քահանա հայրերին, որոնք ծրաքանությամբ, ուխտապահությամբ և ազնվությամբ ծառայում են մեր հավատացյալ ժողովրդին: Մեր մասնավոր գնահատանքը նաև շինարարներին, ճարտարապետ Գալիկյանին, շինարար-ինժեներ Նովհաննիսյանին և նրանց օգնականներին, վարպետներին և բանվորներին և բոլոր պաշտոնյաներին:

Թող Աստված օրհնի այս օրը, որպեսզի մոռացության չտրվի ո՛չ Մեր կողմից և ո՛չ էլ Մեր հաջորդների կողմից: Թող Աստված օրհնի մեր ժողովուրդն ու մայր երկիրը, և որպեսզի աշխարհի խաղաղության պայմաններում նաև այլ հանդիսավոր առիթներով ողջունենք եկեղեցաշեն ու հայրենանվեր այլ իրագործումներ:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով. ամէն»:

Հանդիսավոր արարողությունը վերջանում է «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ԱՎԵՏԻՍ ԲԱՀԱՆՍ. ԴԱՆԻԵԼՅԱՆ